<<ՏՈՒՐԻԶՄԻ ՄԻԱՑՅԱԼ ՖԵԴԵՐԱՑԻԱ>> ՀԿ ԱՐՏԱՀԵՐԹ ԺՈՂՈՎԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ՏՄՖՀԺԱ-002

Սույն արձանագրությունը կազմված է 05.09.2024թ., բաղկացած է 2 թերթից:

<<Տուրիզմի միացյալ ֆեդերացիա>> ՀԿ (այսուհետ՝ Կազմակերպություն) արտահերթ ժողովը գումարվել է 05.09.2024թ., հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ:

Արտահերթ ժողովին մասնակցելու իրավունք ունեին և մասնակցում էին Կազմակերպության բոլոր հիմնադիրները՝ Սեդա Աղբալյան (հիմնադիր ժողովի նախագահ), Մարիամ Անդրոյան (հիմնադիր ժողովի քարտուղար), Աննա Բինայան, Դավիթ Մուրադյան, Աշոտ Պետրոսյան, Գագիկ Գրիգորյան, Բաբկեն Հովսեփյան, որոնց արտահերթ ժողով իրականացնելու ժամի, օրակարգի և այլ տեղեկատվության վերաբերյալ ծանուցվել է արտահերթ ժողովն անցկացման օրվանից 5 օր առաջ:

Ժողովի օրակարգը՝

16.12.2016թ ընդունված <<Հասարակական կազմակերպությունների մասին>> ՀՕ-22-Ն ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 5- րդ, 6-րդ, 7- րդ, 8- րդ, 9- րդ, 10- րդ, 13- րդ և 14- րդ կետերով սահմանված լիազորությունները <<Տուրիզմի միացյալ ֆեդերացիա>> ՀԿ կոլեգիալ մարմնին՝ Խորհրդին փոխանցելու վերաբերյալ:

Ելույթներից և առաջարկություններից հետո օրակարգային հարցը դրվեց քվեարկության:

Ամփոփելով քվեարկության արդյունքները Կազմակերպության հիմնադիր ժողովը միաձայն որոշեց.

<<Տուրիզմի միացյալ ֆեդերացիա>> ՀԿ կոլեգիալ մարմնին՝ Խորհրդին փոխանցել 16.12.2016թ ընդունված <<Հասարակական կազմակերպությունների մասին>> ՀՕ-22-Ն ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 5- րդ, 6-րդ, 7- րդ, 8- րդ, 9- րդ, 10- րդ, 13- րդ և 14- րդ կետերով սահմանված լիազորությունները:

Հիմնադիր ժողովի նախագահ՝ Ս. Աղբալյան

Հիմնադիր ժողովի քարտուղար՝ Մ. Անդրոյան